ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№24/ 1865

Ձեր _____ «29» 07 2016թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահ
տիկին Լ. Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

Ձեր 27.07.2016թ. N 288-9 գրության ներածական մասում հիշատակված տեղեկությունները ստուգման կարիք ունեցող փաստական տվյալներ են, որոնց վերաբերյալ ոստիկանությունը իր գնահատականը կարող է տալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործի և ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում հասարակական կարգի պահպանությանը ներգրավված ոստիկանության ծառայողների կողմից դրսևորած անգործության իրավաչափության գնահատման նպատակով իրականացվող ծառայողական քննության ավարտից հետո:

1. Ոստիկանության կողմից առանձին քաղաքացիների անձնական ազատությունը սահմանափակվել է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված նպատակներով:

2. Բերման ենթարկված բոլոր քաղաքացիները ծանուցվել են իրենց կարգավիճակից բխող իրավունքների մասին, ինչի վերաբերյալ կազմվել են համապատասխան արձանագրություններ: Արձանագրությունների պատճենների տրամադրումը կատարվել է քաղաքացիների ցանկությամբ. թե քա՞նի հոգի է նման ցանկություն հայտնել, ստույգ հայտնել չենք կարող:

Ինչ վերաբերվում է հուլիսի 27-ին Խորենացի փողոցից և հարակից տարածքներից բերման ենթարկված քաղաքացիների թվին, ապա հայցվող տեղեկատվությունը պարզելու համար պահանջվում է լրացուցիչ աշխատանք, ուստի այն կտրամադրվի մինչև ս/թ օգոստոսի 10-ը:

Պետ, ոստիկանության գնդապետ *Հ. Քոչարյան*

Ա. Մարգարյան, հեռ. 59 68 31
ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. (+374 10) 59-65-91, էլ. փոստ legal@police.am